ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/52

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ
Բողոք բերող՝ «Գևորգյան Կոնցեռն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Գևորգյան Կոնցեռն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ղազարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնանշման հարցում, «Քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում միջոցառումների հետ կապված ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Գևորգյան Կոնցեռն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 23.06.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է դադարեցնել թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2021թ.-ի թիվ 6 արձանագրությունը և 14.06.2021թ.-ին հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 18.06.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 22.06.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/10144-2021 գրությամբ բողոքի ընդունումը մերժվել է:

Ընկերությունը 23.06.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

23.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/52 համարի ծածկագիրը:

01.07.2021թ.-ին, 09.07.2021թ.-ին, 16.07.2021թ.-ին և 23.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.07.2021թ.-ին:

2. «Գևորգյան Կոնցեռն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գևորգյան Կոնցեռն» ՍՊԸ-ն 23.06.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1.ՀՀ Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը իր կարիքների համար «քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում միջոցառումների հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարել է թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնանշման հարցումը (այսուհետ նաև Գնման ընթացակարգ).

1.2. Գնման ընթացակարգի շրջանակում մասնակցության հայտ են ներկայացրել նաև «ԱՌԹԱ» ՍՊ ընկերությունը և «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊ ընկերությունը: Գնման ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՌԹԱ» ՍՊ ընկերությունը:

1.3. «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության հայտը չի բավարարում հրավերի պահանջներին և այն՝ այդ թվում գնային առաջարկը, ստորագրված է «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության կողմից համապատասխան լիազորություն չունեցող անձի կողմից:

1.4. Չստորագրված գնային առաջարկում ներկայացված հայտը ենթակա է մերժման:

1.5. «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊ ընկերությունը Գնման ընթացակարգի շրջանակում զբաղեցրել է երկրորդ տեղը և «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության հայտի մերժման դեպքում պետք է ճանաչվի ընտրված մասնակից:

1.6. 27.05.2021 թվականին բողոքարկվել է գնման ընթացակարգը, որը 11.06.2021 թվականին մերժվել է բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 որոշմամբ:

1.7. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի հրապարակվել գնման ընթացակարգի թիվ 4 և թիվ 5 արձանագրությունները:

1.8. Պատվիրատուի կողմից 14.06.2021 թվականին հրապարկվել է թիվ 6 արձանագրությունը, որով ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՌԹԱ» ՍՊ ընկերությունը:

Բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 որոշմամբ ներկայացվել է այն դիրքորոշումը, որ լիազորագրի իրավաչափության վիճարկման արդյունքում, ոչ թե՞ պետք է պարզվեր դրա կեղծ լինելու հանգամանքը և գնային առաջարկը ստորագրող անձի լիազորության բացակայությունը, ուստի այն ենթակա է շտկման:

Սույն դեպքում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 որոշմամբ թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնման ընթացակարգի շրջանակում ենթադրաբար կասեցրել է գնահատող հանձնաժողովի նիստը, հնարավորություն ընթեռնելով «ԱՌԹԱ» ՍՊ ընկերությանը շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, արդյունքում ընտրված մասնակից է ճանաչել «ԱՌԹԱ» ՍՊ ընկերությանը:

Ենթադրությամբ պետք է փաստել, որ գնահատող հանձնաժողովը «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության հայտը ուղարկել է շտկման, որը պետք է ուղարկվեր շտկելու գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետի համաձայն:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման

արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Նշված իրավանորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ օրենսդիրը սահմանել է հատուկ ընթացակարգ գնման գործընթացի շրջանակում մասնակցի կողմից ներկայացված հայտի շտկման վերաբերյալ, ընդ որում սահմանելով պարտադիր կատարման դրույթներ, ինչպես Պատվիրատուի՝ այդ թվում գնահատող հանձնաժողովի, այնպես էլ մասնակցի համար: Գնման գործընթացի շրջանակում մասնակցի կողմից ներկայացված հայտում անհամապատասխանությունների արձանագրման դեպքում, դրանց շտկման գործընթացի ժամանակ Գնահատող հանձնաժողովը ունի հետևյալ պարտականությունները նաև պետք է հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնի նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցի մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, իսկ մասնակիցը պետք է կասեցման ժամանակահատվածում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկի արձանագրված անհամապատասխանությունը: Նշված վավերապայմանների միաժամանակյա կատարման

գործընթացում նոր միայն կարելի է փաստել հայտում արձանագրված անհամապատասխանության շտկման իրավաչափության մասին, քանզի միայն հանձնաժողովի կողմից կատարված գործողությունների հրապարակայնության դեպքում նոր կարելի է գնահատական տալ այն փաստին, թե արդյո՞ք մասնակցի կողմից սահմանված ժամկետում է կատարվել շտկումը, թե՞ ոչ, քանզի հակառակ պարագայում հայտը ենթակա կլինի մերժման:

Սույն դեպքում բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանը թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 որոշումը հրապարակել է 11.06.2021 թվականին, որը ուժի մեջ է մտել 14.06.2021 թվականին: Նշված օրը նոր միայն գնահատող հանձնաժողովի կողմից կարող էր ընդունվել որոշում բացման և գնահատման նիստի կասեցման և արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ մասնակցին մեկ աշխատանքային օր տրամադրելու համար, ընդ որում նիստի կասեցումից հետո հանձնաժողովի քարտուղարը պետք է նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեր այդ մասին մասնակցին, ուստի պետք է փաստել, որ մինչև 15.06.2021 թվականը պետք է կասեցվեր «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման հարցման բացման և գնահատման նիստ արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ մասնակցին շտկելու հնարավորություն տալու համար, այսինքն առավելագույն սեղմ ժամկետներում հաջորդ նիստը կարող էր հրավիրվել 16.06.2021 թվականին, սակայն չգիտես ինչ կերպ 14.06.2021 թվականին արդեն իսկ կայացվեց արձանագրված անհամապատասխանության շտկումից հետո նիստ և «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության հայտը գնահատվեց բավարար:

Վերոհիշյալ իրավական նորմերի և սույն փաստերի համադրության մեջ պետք է արձանագրել հետևյալը, որ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման հարցման ընթացակարգում «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության հայտում արձանագրված անհամապատասխանությունը շտկվել է օրենսդրական կարգի խախտմամբ և չի պահպանվել օրենսդրի կողմից նման գործընթացի համար նախատեսված կարգը:

Ուստի պայմանավորված վերոգրյալով գտնում եմ, որ թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 14.06.2021 թվականի թիվ 6 արձանագրությունը և նույն օրը հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը ենթակա են դադարեցման:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է դադարեցնել թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի 14.06.2021թ.-ի թիվ 6 արձանագրությունը և 14.06.2021թ.-ին հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. <u>ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 23.06.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10314-2021 և 08.07.2021թ.-ի /ԲՔԱ-ԼՕ/1/11161-2021 գրություններով դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Գևորգյան Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից 23.06.2021թ.-ի ներկայացված բողոքի և 02.07.2021թ.-ին ներկայացված միջնորդության վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 25.06.2021թ.-ին թիվ 02/17.4/21195-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր ս.թ. հունիսի 24-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10314-2021 գրությամբ ներկայացված բողոքի (այսուհետ՝ Բողոք) վերաբերյալ վարչապետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) հայտնում է հետևյալ դիրքորոշումը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ որոշումը պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին ուղարկելուն հաջորդող օրը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից ընդունաց ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 որոշումը հրապարակվել է 11.06.2021թ., ուստի վերը նշված որոշումն ուժի մեջ է մտել 12.06.2021թ., այլ ոչ թե 14.06.2021թ., ինչպես նշված է Բողոքում:

Օրենքի 33-րդ հոված 8-րդ և 34-րդ հոդվածի 9-րդ մասերով սահմանվել է, որ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում, իսկ հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Այսպիսով, օրենսդրությամբ սահմանվել է հայտերի բացման և գնահատման նիստերի արձանագրությունները տեղեկագրում հրապարակելու իմպերատիվ պահանջ, որը պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում կատարվել է:

Ինչ վերաբերում է պատվիրատուի գնահատող հանձնաժողովի նիստերի NN 4, 5 արձանագրությունները չհրապարակելուն, ապա հայտնում ենք, որ նման պահանջ օրենսդրությամբ սահմանված չէ, ուստի նշված արձանագրությունները չհրապարակելը չի կարող դիտվել որպես հանձնաժողովի կողմից օրենսդրության պահանջի խախտում:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է օրենքի 10-րդ հողվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները, ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ, բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ բողոքներ քննող անձի կողմից բողոքի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Վերոգրյալի կապակցությամբ տեղեկացնում ենք, որ վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կարիքների համար «Քայլ դեպի տուն» միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնանշման ընթացակարգի արդյունքում ս.թ. հունիսի 23-ին կնքվել է ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28-1 պայմանագիր, որն ուժի մեջ է մտել կողմերի ստորագրման պահից:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Բողոքներ քննող անձի կողմից սույն բողոքի վերաբերյալ հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 23.06.2021թ., ուստի «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի՝

23.06.2021թ. շտկված տարբերակն անհիմն է և ժամանակավրեպ, հետևաբար, ամբողջովին ենթակա է մերժման:»:

Պատվիրատուն 13.07.2021թ.-ի թիվ 02/17.4/23335-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշման լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր ս.թ. հուլիսի 9-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/11161-2021 գրության ներկայացնում ենք «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի կողմից 02.07.2021թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված միջնորդությամբ (այսուհետ՝ միջորդություն) պահանջված փաստաթղթերը (կցվում են):

Միևնույն ժամանակ, անդրադառնալով միջնորդությամբ ներկայացված մի շարք դիտարկումների, հարկ ենք համարում կատարել հետևյալ շեշտադրումները.

Գտնում ենք, որ բողոքաբերի կողմից բողոքով բարձրացված հարցերի (մասնավորապես, հանձնաժողովի նիստերի արձանագրությունների հրապարակման, պայմանագիր կնքելու որոշման հրապարակման և պայմանագրի կնքման ժամկետների, ինչպես նաև պայմանագիր կնքելու որոշման իրավաչափության) վերաբերյալ վարչապետի աշխատակազմի կողմից սպառիչ պարզաբանումներ են ներկայացվել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 25.06.2021թ. թիվ 02/17.4/21195-2021 գրությամբ:

Հարկ ենք համարում նշել, որ վերոհիշյալ միջնորդությամբ բողոքաբերի կողմից ներկայացվել են միանգամայն ենթադրական բնույթ կրող և իրականության հետ որևէ աղերս չունեցող դիտարկումներ, իսկ վերջինիս՝ իբր «հիմնավոր» կասկածների վրա կառուցված եզրահանգումներն ակնհայտորեն դուրս են տրամաբանական վերլուծության և գնահատման դաշտից:

Ինչ վերաբերում է պայմանագրի կնքման իրավաչափությանը, ապա հայտնում ենք, որ վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կարիքների համար «Քայլ դեպի տուն» միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով ս.թ. հունիսի 23-ին կնքված 1\1ՀՀՎԱ-ԳՀԾՅԲ-21/28-1 պայմանագիրն ամբողջովին համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին (ապացույցները ներկայացվում են կից փաստաթղթերով), ուստի չի կարող համարվել առ ոչինչ, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կնքված պայմանագիրն առ ոչինչ է, եթե այն կնքվել է մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/52 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից «Քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում միջոցառումների հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով 12.05.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. «Գևորգիան Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից 31.05.2021թ.-ին ներկայացվել է բողոք, որը նույն օրը՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից ընդունվել է վարույթ և հրապարակվել է www.gnumner.am կայում:

iii. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից 11.06.2021թ.-ին կայացվել է թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 ծածկագրով որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում):

iv. Որոշման համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված լիազորագիրը և համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտել է, որ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված լիազորագիրը չի կարող համարվել որպես պատշաճ ներկայացված փաստաթուղթ, ուստի, այն Կարգի 41-րդ կետի համաձայն, ենթակա է շտկման:

v. Որոշումը պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, հրապարակվել է 11.06.2021թ.-ին:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.06.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 2021 թվականի հունիսի 11-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 որոշումը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, մասնավորապես՝ ներկայացնել էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված բնօրինակից սկանավորված լիազորագիրը:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 12.06.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի haykahovhannisyan@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկվել արձանագրված անհամապատասխանությունը շտկելու մասին ծանուցում:

viii. Հանձնաժողովի 14.06.2021թ.-ի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է անհամապատասխանությունը, մասնավորապես՝ ներկայացվել է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված բնօրինակից սկանավորված լիազորագիրը:

ix. Նույն արձանագրության համաձայն՝ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած՝ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ն:

x. 14.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է « ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

xi. Հայտարարությամբ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

xii. ՀՀ Վարչապետի աշխատակազմի և «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի միջև 23.06.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՎԱ-ԳՀԾՁԲ-21/28-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

xiii. Պատվիրատուի կողմից 24.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀ ՎԱ-ԳՀԾՁԲ-21/28-1» ծածկագրով կնքված պայմանագրի մասին հայտարարություն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Գևորգյան Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից 23.06.2021թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Նույն հոդվածի 9-րդ և 11-րդ մասերի համաձայն՝ … բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում կայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում որոշումը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի (այսուհետ նաև՝ Հրաման) 9-րդ կետի համաձայն՝ բողոքը վարույթ ընդունելու օրվանից մեկ աշխատանքային

օրվա ընթացքում Անձը բողոքը և դրա վերաբերյալ հայտարարությունը, հրապարակում է տեղեկագրում:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պայմանագիր կնքելու մասին որոշումը: Նման պարագայում բողոքը ներկայացվում է օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում: Բողոքներ քննող անձը բողոքը ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, որի արդյունքում հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը գնման գործընթացը ինքնաբերաբար կասեցվում է:

Այսինքն՝ գնման գործընթացը կասեցվում է օրենքի ուժով, այն է՝ ներկայացված բողոքը վարույթ ընդունելու մասին նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից և շարունակում է ընթացակարգը կասեցված մնալ մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Ընդ որում, Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված է Բողոքներ քննող անձի իրավասությունների շրջանակը, որից և ելնելով Բողոքներ քննող անձը քննում է ներկայացված բողոքն ու կայացնում է որոշումներ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից «Քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում միջոցառումների հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով 12.05.2021թ.-ին հայտարարված «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշման դեմ «Գևորգիան Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից 31.05.2021թ.-ին ներկայացվել է բողոք որը նույն օրը՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից ընդունվել է վարույթ և հրապարակվել է www.gnumner.am կայում: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից 11.06.2021թ.-ին կայացվել է թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 ծածկագրով որոշում, որի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված լիազորագիրը և համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտել է, որ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված լիազորագիրը չի կարող համարվել որպես պատշաճ ներկայացված փաստաթուղթ, ուստի, այն Կարգի 41-րդ կետի համաձայն, ենթակա է շտկման: Որոշումը պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում,

հրապարակվել է 11.06.2021թ.-ին: Հանձնաժողովի 12.06.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ որոշում է կայացվել նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, մասնավորապես՝ ներկայացնել էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված բնօրինակից սկանավորված լիազորագիրը, ինչով պայմանավորված Հանձնաժողովի քարտուղարի կողմից 12.06.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի haykahovhannisyan@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկվել արձանագրված անհամապատասխանությունը շտկելու մասին ծանուցում: Հանձնաժողովի 14.06.2021թ.-ի թիվ 6 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է անհամապատասխանությունը, մասնավորապես՝ ներկայացվել է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված բնօրինակից սկանավորված լիազորագիրը, ինչով պայմանավորված որոշում է կայացվել ընտրված մասնակից ճանաչել «ԱՌԹԱ» ՍՊԸ-ին: 14.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: ՀՀ Վարչապետի աշխատակազմի և «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի միջև 23.06.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՎԱ-ԳՀԾՁԲ-21/28-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր, ինչի մասին 24.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀ ՎԱ-ԳՀԾՁԲ-21/28-1» ծածկագրով կնքված պայմանագրի մասին հայտարարություն:

Ելնելով վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքերից, դրանց համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում՝ գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրի առկայության պայմաններում, սույն բողոքի քննությունը դառնում է առարկայազուրկ, այն փաստի հաշվառմամբ, որ խախտումներ արձանագրելու դեպքում, այն չի կարող հանգեցնել կնքված պայմանագրի անվավեր ճանաչման մասին որոշում կայացնելուն՝ հիմք ընդունելով Օրենքի Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով ամրագրված Բողոքներ քննող անձին վերապահված լիազորությունների ու իրավասությունների սահմանները:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն

դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է դադարեցնել թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2021թ.-ի թիվ 6 արձանագրությունը և 14.06.2021թ.-ին հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «ԱՌԹԱ» ՍՊԸ-ն և «Գևորգիան Կոնցեռն» ՍՊԸ-ն, ներկայացնելով համապատասխանաբար՝ 58 000 000 ՀՀ դրամ և 59 700 000 ՀՀ դրամ գումար առանց ԱԱՀ գնային առաջարկներ:

Հանձնաժողովի 14.06.2021թ.-ի թիվ 6 արձանագրության համաձայն «ԱՌԹԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Վերոգրյալ իրավական նորմի լույսի ներքո, ուսումնասիրելով գործում առկա՝ վերը թվարկված փաստերը, ինչպես նաև Հանձնաժողովի 12.06.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրությունը՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ տվյալ դեպքում առկա չեն այնպիսի հանգամանքներ, փաստական տվյալներ, որոնց հաշվառմամբ արձանագրվեր «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի կողմից կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) ներկայացնելու փաստը, կամ այն, որ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու

մասին Հանձնաժողովի կողմից կայացված որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, որպիսի պայմաններում՝ վերջինիս հետ կնքված պայմանագրի ոչ իրավաչափ լինելը:

Այլ կերպ ասած՝ Հանձնաժողովի կողմից «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի մասով իրականացված գործողությունների անգամ որպես ոչ իրավաչափ լինելու հանգամանքի արձանագրման դեպքում, և հանձնաժողովի 14.06.2021թ.-ի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշումները դադարեցնելուն պարտավորեցնելու մասին բողոքով ներկայացված պահանջների բավարարմամբ, այն չի կարող հանգեցնել «ԱՌԹԱ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշման փոփոխման, քանի որ գործում առկա փաստերով ու ապացույցներով հիմնավորվում է, որ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի կողմից արդեն իսկ Հանձնաժողովին է ներկայացվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 ծածկագրով կայացված որոշմամբ արձանագրված ներկայացման ենթակա անհրաժեշտ փաստաթուղթը, ուստի այդ փաստաթղթի կրկին անգամ ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայում է:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապատասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են, և ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գևորգիան Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված

պահանջը, կնքված պայմանագրի առկայության պայմանենրում, դառնում է առարկայազուրկ, ուստի և մերժման ենթակա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գևորգյան Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից 23.06.2021թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/52 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**